ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 2017 Թ. ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Հաշվետու ժամանակում ակադեմիայում իրականացվել են աշխատանքներ հետևյալ ուղղություններով՝

- 1. ղեկավար կազմի և մասնագետների վերապատրաստում, որակավորման բարձրացում.
- 2. իրշեջ-փրկարարների վերապատրաստում, որակավորման բարձրացում.
- 3. բարձրագույն և միջին մասնագիտական կրթական ծրագրերով մասնագետների պատրաստում.
- 4. բնակչության ուսուցում.
- 5. գիտամեթոդական աշխատանքների կատարում.
- 6. մշակութային դաստիարակության աշխատանքների կատարում.
- 7. միջազգային համագործակցություն.
- 8. լրացուցիչ աշխատանքներ։

1. Ղեկավար կազմի և մասնագետների վերապատրաստում, որակավորման բարձրացում.

2017 թ. ակադեմիայում վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթաց է անցել 1941 ունկնդիր (պլանով՝ 1830) 90 ուսումնական խմբերում (պլանով՝ 86 խումբ)։

Հաշվետու ժամանակաշրջանում ՝

- > << նախարարություններից և գերատեսչություններից ուսուցում է անցել 442 ունկնդիր.
- ՀՀ մարզերից ուսուցում է անցել 426 ունկնդիր.
- Երևանի քաղաքապետարանից և Երևան քաղաքի վարչական շրջաններից
 ուսուցում է անցել 1073 ունկնդիր։

2. <րշեջ-փրկարարների վերապատրաստման և որակավորման բարձրացման ուղղությամբ.

Հաշվետու ժամանակահատվածում ՃԿՊԱ-ի փրկարարական ֆակուլտետում դասընթացներին, առարկայական ստուգարքներին ու քննություններին մասնակցել է 422 փրկարարական ծառայող (պլան ժամանալացույցով նախատեսված 332-ի փոխարեն), 260 եռամսյա ուսումնական փորձաշրջանի մասնակից և թվով 35 ունկնդիր այլ կառույցներից։

Մասնակցել է թվով 10 միջոցառումների, գիտական կոնֆերանսների, ուսումնասիրել, քննարկել և առաջարկություններ է ներկայացրել 8 փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ, մշակել պաշտոնների անձնագրեր և գործառութային պարտականություններ, դասընթացների ծրագրեր, հարցաշարեր, պլան-ժամանակացույց և այլ փաստաթղթեր։

3. Բարձրագույն և միջին մասնագիտական կրթական ծրագրերով մասնագետների պատրաստում.

Ուսանողների թիվը	Բակալավրի կրթական ծրագիր		Մագիստրոսի կրթական ծրագիր		Միջին մասնագի փակա ն
	առկա	իեռակա	առկա	իեռակա	կրթական ծրագիր
Ընդունվել է՝	110, որից	163,			
	60-ը՝	II կուրս՝	_	25	51
	անվճար	32			
Ավարտել է՝ 221	33	151		25	37
6	27	71	-	1	4
ազատված	59	54	-	-	2
/ազգային բանակ					
ազատված /այլ	38	82	-	14	2
պատճառով					
ԸՆԴԱՄԵՆԸ	203 nnha				
ուսանողների թիվը	293, որից 182-ր	620		44	154
25.12.2017 թ.	_	020	_	44	154
դրությամբ	անվճար				

Այսպիսով՝

- 1. Բակալավրի կրթական ծրագրով ուսանողների թիվը 913 է,
- 2. Մագիսփրոսի կրթական ծրագրով ուսանողների թիվը՝ 44,
- 3. միջին մասնագիտական կրթական ծրագրով սովորողների թիվը՝ 154։

Առ 25.12.2017 թ. ակադեմիալում սովորում է 1111 ուսանող։

4. Բնակչության ուսուցում.

Բնակչության ուսուցման ուղղությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները.

- > արտակարգ իրավիճակներից պաշտպանության հարցերով ելույթներ գանգվածային լրատվամիջոցներով։
- Վերապատրաստման մասնակցած ՆՈՒՀ-ի, հանրակրթական դպրոցների, ՄՄՈՒՀ-ի. ԲՈՒՀ-երի ներկայացուցիչներին տրվել են ակադեմիայում ստեղծված ուսումնական նյութերի կայքերը։
- > Նախադպրոցական կրթական հաստատությունների և հանրակրթական դպրոցների ներկայացուցիչներին հանձնվել են «Ես կարող եմ», «ԱՌՆ կրթություն.

«Թե պատկերն այդ ճանաչես, ինքդ քեզ միշտ կփրկես», «Գիտեմ, պատրաստ եմ, կարող եմ...» ձեռնարկներ։

5. Գիտամեթոդական աշխատանքների կատարում.

Հաշվետու ժամանակահատվածում՝

- > Հրատարակվել է շուրջ 30 ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանք, «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական և գիտամեթոդական հոդվածների ժողովածուն, «Ճգնաժամ հաղթահարողներ» ուսանողական թերթը։
- Հրատարակվել է միջբուհական ուսանողական գիտաժողովի նյութերը՝ 21 հոդված։
- Հրատարակման է պատրաստվել 105 գիտական հոդված (որից 48-ը գրվել է ակադեմիայի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից) «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական և գիտամեթոդական հոդվածների ժողովածուում հրատարակելու համար։
- Մշակվել և վերամշակվել են 10 դասախոսութան կոնսպեկտներ (հիմնականում՝ Էլեկտրոնային):
- Էրամշակվել են վերապատրաստման ուսումնա-մեթոդական պլաններ տարբեր կատեգորիանների համար։
- Տրվել են կարծիքներ 4 գիտական աշխատանքների վերաբերյալ:
- Դ Ղեկավարվել է 34 մագիստրոսական ատենախոսություն։
- Մշակվել են կարգեր, կանոնակարգեր, ընթացակարգեր և այլ փաստաթղթեր կրթության զարգացման և որակի ապահովման ուղղությամբ։
- Ներկայացվել են շուրջ 35 զեկուցումներ միջազգային գիտական, գիտագործնական խորհրդակցություններում և խորհրդաժողովներում։
- Ապահովվել է 911 պաշտոնաթերթի կայուն հրատարակումը:

6. Մշակութային դասփիարակության աշխափանքների կափարում.

Հաշվետու տարում մշակութային դաստիարակության աշխատանքների կատարման ուղղությամբ ուսանողներն իրականացրել են միջոցառումներ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Զատիկ երեխաների աջակցության կենտրոնում, Ձորաղբյուր գյուղի միջնակարգ դպրոցում, Խնկո ապոր գրադարանում, Սարդարապատում, Ոստիկանության Ակադեմիայում և այլուր։

- > Այցելել են տուն թանգարաններ, մատենադարան, ազգային պատկերասրահ, Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, Էջմիածին և այլն,
- իրականացրել են արշավ դեպի Հատիս լեռ,
- իրականացրել են հանդիպում արվեստի, պոեզիայի և այլ ոլորտների ճանաչված ներկայացուցիչների հետ,

- իրականացրել են միջոցառումներ «Ակադեմիա 911» ուսանողական պարի և
 «Ակադեմիա 911» ստեղծագործական համույթների ներկայացմամբ,
- մասնակցել են «Բազե-2017» համահայկական երիտասարդական հավաքին,
- 🕨 մասնակցել են միջբուհական ուսանողական սպորտային մրցումներին,
- 🕨 մասնակցել են միջբուհական ուսանողական գիտաժողովների։

7. Միջազգային համագործակցություն.

Ակադեմիան իրականացրել է ուսուցման միջազգային ծրագրեր ՄԱԿ-ի UNDP-ի, unisef-ի, Սեյվ դը Չիլդրն-ի, Գերմանական կարմիր խաչի շրջանակներում, մասնակցել է մի շարք գիտագործնական սեմինարների Ռուսաստանի դաշնությունում, Վրաստանի Հանրապետությունում և Հայաստանի Հանրապետությունում։

Լրացուցիչ աշխափանքներ.

- Իրականացվում են համատեղ աշխատանքներ Dasaran.am-ի հետ, ինչն ուղղված է դպրոցների ուսուցչական անձնակազմի և աշակերտների շրջանում անվտանգության մշակույթի, արտակարգ իրավիճակներում ճիշտ վարքականոնների ձևավորմանն ու ամրապնդմանը, 7 տեսակի վտանգների ուղղությամբ։
- Ուսումնասիրվում են քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության հարցերով դիստանցիոն (հեռավար) ուսուցման ներդրման հարցերը։
- > Ակադեմիային << «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից շնորհվել է պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագիր 2 տարի ժամկետով։
- Ակադեմիային տրամադրվել է լիցենզիա մագիստրոսի կրթական ծրագրով ևս 2 մասնագիտությունների գծով՝ <ոգեբանություն (Աղետների հոգեբանություն) և Նախնական զինվորական պատրաստություն (Կենսագործունեության անվտանգություն):</p>
- > Ակադեմիային տրամադրվել է միջին մասնագիտական կրթական ծրագրի վերաձևակերպված անժամկետ լիցենզիա։
- 🕨 Կազմակերպվել է միջազգային գիտաժողովներ և նյութերը հրատարակվել։
- Հրատարակվել են հոդվածներ արտերկրում։
- Կնքվել են միջազգային պայմանագրեր և հուշագրեր։
- Կազմակերպվել են հետիոտն արշավներ մատաղ սերնդի ֆիզիկադաստիրակչական և հայրենասիրական աշխատանքների իրականացման նպատակով։

- Դասախոսները մշտապես մասնակցել են քաղաքացիական ծառայողների մրցույթային և ատեստավորման հանձնաժողովների, ինչպես նաև ԱԻՆ առանձնացված ստորաբաժանումների մասնագետների ատեստավորման հանձնաժողովների նիստերին և ԱՌՆ կրթության հարցերով գիտագործնական սեմինարների։
- Ստեղծվել է Ակադեմիայի կայքը։
- > Ձևավորվել է «911 արտակարգ շաբաթաթերթ»-ի էլեկտրոնային տարբերակը։

9.Ուսումնական բազայի բարելավում.

Ուսումնական բազայի բարելավման ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Կառուցվել են խոչընդոտների հաղթահարման վարժահրապարակ և ավելացվել գործնական աշխատանքներ կատարելու հնարավորությունները «Լուսակերտ» ուսումնագործնական պարապմունքների բազայում։
 - 🕨 🛾 Ձևավորվել են խոչրնդոտներ հաղթահարելու համար անհրաժեշտ նոր մոդելներ։

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Կառավարման մարմինների և կազմակերպությունների ղեկավար կազմի ու մասնագետների վերապատրաստում՝ շուրջ 1800 ունկնդիր։
- 🕨 Հրշեջ-փրկարարների վերապատրաստում՝ շուրջ 350 ունկնդիր։
- Շարունակել բակալավրի, մագիստրոսի և միջին մասնագիտական կրթական
 ծրագրերի իրականացումն ըստ հաստատված ծրագրերի։
- Մշակել նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթական ծրագրերի պահանջվող փաստաթղթերը 4 մասնագիտությունների գծով, լիցենզավորման նպատակով։
- 🕨 Մշակել և հրատարակել ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկներ։
- > «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական և գիտամեթոդական հեդվածների ժողովածուի հրատարակում։
- 🕨 «911 արտակարգ շաբաթաթերթ»-ի էլեկտրոնային տարբերակի զարգացում։
- » «Լուսակերտ» ուսումնագործնական պարապմունքների բազայում վարժահրապարակի զարգացում, նոր մոդելների ձևավորում։
- Ձևավորել ԱԻՆ սպորտային ակումբը։